25. 240.—

Հրատարակված է համաձայն ԹՍՀՄ կենտգործկոմի և ԺԿԽ 15 հունիսի 1929 վորոշման կ. 14։

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ԵԵՐԵՎԱՆ 1929

0 9 .09. 2013

25.240

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտի լիազոր 2774 թ. Պատվեր 180
Տիրաժ 1500

15 JAN 2010

332-2
Յ-11

I. ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Պետվարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովները կազմակերպվում են բոլոր գյուղխորհուրդներին կից, վորպես մշտական գործող մարմիններ։

2. Ոժանդակող հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ ձևով.—Հանձնաժողովի նախագահը հանդիսանում է գյուղխորհրդի նախագահը։ Համամիութենական Կ. Կ. (բ) և Կոմյերիտմիության տեղական բջիջները, Խնայողական Գանձարկղը, գյուղատնտեսական վարկային հիմնարկները, փոստը և տեղական կոոպերատիվ կազմակերպությունները իրենց միջից հանձնաժողովի համար մի մի ներկայացուցիչ են ջոկում։ Բացի դրանից, վորպես ներկայացուցիչներ հանձնաժողովի կազմի մեջ են մտնում չքավորներից 2—3 հոգի, գյուղացիության միջակ դասից 2 հոգի և խորհրդային ու կոլտնտեսություններից 2 հոգուց վոչ պակաս։

3. Գյուղացիության չքավոր ու միջակ մասից, խորհրդային ու կոլտնտեսություններից հանձնաժողովի կազմի մեջ վորպես ներկայացուցիչ ընտրում է գյուղխորհուրդը։ Գյուղխորհրդի վորոշման համաձայն ոժանդակող հանձնաժողովները յուրաքանչյուր գյուղի համար իրենց միջից կարող են լիազորներ ընտրել։

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ Անվան
Публичная Библиотека
14914-57

4. Ցանկալի է, որ ոժանդակող հանձնաժողովների մեջ այնպիսի ընկերներ մտնեն, որոնք փոխառությունների իրացմանն առաջուց մասնակցել են և այդ գործում որոշ ընդունակություններ են հայտնաբերել. նույնպես և այն գյուղացիները, որոնք որպես հանձնաժողովի անդամներ կամ պատգամավորներ մասնակցել են փոխառությունների վիճակահանությանը. զորացրած կարմիր բանակայինները, գյուղի կուլտուրական աշխատավորները (ուսուցիչ, գյուղատնտես, բժիշկ, խրճիթվար և այլն)։

5. Ոժանդակող հանձնաժողովները նշանակվում են մեկ տարի ժամանակով։ Ոժանդակող հանձնաժողովը ժամկետից առաջ արձակելը կատարվում է.—1) գյուղի չքավոր ու միջակ մասերի, գյուղխորհուրդների ու շրջգործկոմների պահանջմամբ. 2) գյուղխորհրդի պահանջմամբ և 3) շրջգործկոմներին կից գոյություն ունեցող ոժանդակող հանձնաժողովների պահանջմամբ։ Բացի հանձնաժողովի ամբողջ կազմի այդ ժամկետից առաջ արձակվելուն, կարող է հանձնաժողովի այս կամ այն անդամը ժամկետից առաջ իր անգործունեության համար հետ կանչվել։

6. Ոժանդակող հանձնաժողովն իր առաջին նիստում իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար։ Ոժանդակող հանձնաժողովի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունն ընկնում է նախագահի վրա. նա պետք է կենդանի կապ պահպանի շրջգործկոմներին կից գոյություն ունեցող ոժանդակող հանձնաժողովների, ֆինբաժինների և մոտակա խնայողական գանձարկղի հետ։ Քարտուղարը պարտավոր է ոժանդակող հանձնաժողովի բոլոր վորոշումները ձևակերպել, ստուգել և հետևել նրանց կիրառմանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ցանկալի է քարտուղարն ընտրել գյուղի կուլտաշխատավորներից (ուսուցիչ, խրճիթվար, գյուղատնտես և այլն)։

7. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովների աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը պատկանում է շրջգործկոմներին կից գոյություն ունեցող պետվարկին ոժանդակող հանձնաժողովներին, որոնք սերտ գործակցության մեջ են լինում համապատասխան ֆինմարմինների հետ։ Ոժանդակող հանձնաժողովների հրահանգների տեխնիկական մասն ի կատար է ածվում վարկֆինարկների կամ տվյալ մոտակա գյուղի խնայողական գանձարկղի կողմից։

Ոժանդակող հանձնաժողովները յուրաքանչյուր վեց ամսից վոչ ուշ, հաշվետվություն են ներկայացնում իրենց գյուղխորհուրդներին։ Բացի դրանից գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները, նույն ժամանակամիջոցում հաշվետու են շրջանային ոժանդակող հանձնաժողովների առաջ—բանավոր կամ գրավոր զեկուցման միջոցով։

II. ԱԳԻՏԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

8. (Ագիտացիոն) Ոժանդակող հանձնաժողովի բանավոր ագիտացիան տարվում է զեկույցների, զրույցների, միտինգների, ինչպես և պետփոխառության և խնայողական գանձարկղի վերաբերյալ կազմակերպված հարց ու պատասխանի յերեկոների միջոցով։

Բացի դրանից ոժանդակող հանձնաժողովները կազմակերպում են կինո նկարների ցուցադրումներ և դիապոզիտիվներ տարածում են պլակատներ, լոզունգներ և հայտարարություններ։

9. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները պետք է առանձին ուշադրություն դարձնեն գյուղխորհրդում, խրճիթ-ընթերցարանում, կոոպերատիվ հիմնարկներում չեղած պատի թերթերի ոգտագործմանը։ Ոժանդակող հանձնաժողովները պետք է ձգտեն, վոր պետփոխառությունների և խնայողական գանձարկղներին վերաբերյալ հարցերի մասին պատի թերթերում առանձին մշտական տեղ (սունյակ) հատկացվի։

10. Գյուղխորհուրդներին կից գործող ոժանդակող հանձնաժողովները պետք է գյուղխորհուրդների ընտրություններին մասնակցեն, կամպանիա տանեն, ոգտագործելով այդ կամպանիաները պետփոխառությունների և խնայողական գործի ագիտացիայի նպատակների համար. պետք է միջոցներ ձեռք առնեն, վոր նոր ընտրված խորհրդի անդամների նակազի (հրահանգի) մեջ փոխառության պարտատոմսեր պահողների և խնայողական գանձարկղների ավանդատուների սպասարկման գործի բարելավման առթիվ փորձնական առաջարկներ անցկացվեն։

III. ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ

11. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովի խնդիրները խորհրդատու (կոնսուլտացիոն) տեղեկատու աշխատանքի բնագավառում կայանում է նրանում, վոր պետվարկի ու խնայողական գանձարկղի վերաբերյալ տեղեկանքներ ու խորհուրդներ տալու գործը կազմակերպվի ու լավ հիմքերի վրա դրվի։

12. Առանձին ուշադրություն պետք է դարձնել խրճիթ-ընթերցարաններում կամ այլ կուլտուրական հիմնարկներում, հատկապես կարմիր անկյուններում, փոխառությունների ու խնայողական գանձարկղների անկյան կազմակերպման վրա, ուր տեղեկատու բաժնին առանձին տեղ է հատկացվելու և վորտեղ կենտրոնացվելու յեն պետվարկի ու խնայողական գանձարկղների վերաբերյալ տեղեկատու, ագիտացիոն և ինֆորմացիոն նյութերը։ Ոժանդակող հանձնաժողովներն այդ նյութերն ստանում են ֆինբաժիններից, խնայողական դրամարկղներից կամ շրջանային ոժանդակող հանձնաժողովներից։

13. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները պետփոխառությունների և խնայողական դրամարկղների վերաբերյալ տեղեկություններ ու խորհուրդներ տալու համար առանձին որեր են նշանակում։ Ոժանդակող հանձնաժողովները տեղեկություններ ու առհասարակ խորհուրդներ տալու աշխատանքների կազմակերպման մասին հայտնում են գյուղի հասարակությանը պատի թերթերի, հայտարարությունների, ժողովներում բանավոր և գրավոր հայտարարությունների միջոցով։

14. Ոժանդակող հանձնաժողովները պետփոխառությունների և խնայողական գործի աշխատանքներին կանոնավոր ընթացք տալու և անընդհատ սպասարկելու համար իրենց միջից կամ ուրիշ ակտիվ աշխատակիցներից հերթապահություն են նշանակում։

15. Ոժանդակող հանձնաժողովների բոլոր այն

անդամներն ու այլ ակտիվ աշխատակիցները, որոնք նշանակված են հերթապահության համար, պետք է այնպես պատրաստված լինեն, որ ըստ հնարավորության կարողանան պետփոխառությունների և խնայողական դրամարկղների մասին ամեն տեսակ տեղեկություններ և խորհուրդներ տալ։ Դրա համար էլ նրանք պետք է հանձնաժողովներում գտնված բոլոր նյութերի հետ ուշադրությամբ ծանոթանան։ Բացի դրանից անհրաժեշտ է, որ տեղական խնայողական դրամարկղի ներկայացուցիչը հանձնաժողովի անդամների և նրա ակտիվի հետ մի քանի փորձնական պարապմունքներ ունենա, որպեսզի այդ պարապմունքների միջոցով հերթապահները փորձնական տեղեկություններ տալու հետ ծանոթանան. ինչպես օրինակ՝ (պարտատոմսի համարը խաղարկության աղյուսակի հետ ստուգել կարողանալը, բացատրել, թե ինչպես պետք է խաղատոմսը պահ տալ, օբլիգացիայի փոխարեն փոխատվություն ստանալ, որոշել օբլիգացիայի արժեքը, պարտատոմսերի պայմանները, փոխառություններն ինչպես են իրարից տարբերվում, ծանոթացնել խնայողական դրամարկղների գործառնություններին, որ տեղերում մոտիկ դրամարկղներ կան, ծանոթացնել թե ինչպես ավանդ դնել ու հետ վերցնել պարտատոմսերը, ինչպես փոխադրություններ կատարել և ոգտվել ակկրեդիտիվներից, գյուղմիասնարկը վճարելիս ինչպես ոգտվել դրամարկղից և այլն)։

16. Տեղեկություններ տալու աշխատանքներին անցնելիս, ոժանդակող հանձնաժողովներն պետք է իրենց ձեռքի տակ հետևյալ նյութերն ունենան—

ա) պետփոխառությունների խաղարկությունների տարեկան աղյուսակը, բ) փոխառությունների շահող աղյուսակը, գ) տեղեկություններ զանազան փոխառությունների կտրոնների վճարման ժամկետների մասին, դ) հանրամատչելի գրականություն պետփոխառությունների ու խնայողական գանձարկղների մասին, ե) ագիտացիոն նյութեր, պլակատներ, լոզունգներ և այլն, զ) պետփոխառության և խնայողական գանձարկղի վերաբերյալ հիմնական վիճակագրական աղյուսակներ, է) տեղեկություններ խնայողական գանձարկղի աշխատանքների մասին, ը) մասսայական փոխառությունների հիմնական պայմանները, թ) պետփոխառության և խնայողական գանձարկղների վերաբերյալ ձեռնարկներ՝ ակտիվիստների համար։

17. Նոր փոխառություններն իրացնելու ժամանակ տեղեկատու սեղանները (բաժինները) պետք է բոլոր տեսակի ագիտացիոն, ինֆորմացիոն և ուրիշ նյութերն ունենան, ոչ թե միայն այս կամ այն տեղեկությունները տալու համար, այլև բոլոր ցանկացող գյուղացիներին բաժանելու համար։

IV. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ-ՍՏՈՒԳՈՒՄ

18. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովները հսկում են, որ խնայողական գանձարկղը, գյուղատնտեսական վարկային կամ տվյալ գյուղում լեղած ուրիշ վարկային հիմնարկները բոլոր ֆոնդային գործառնությունները կատարեն կենտրոնական մարմինների կողմից տրված դիրեկտիվների համաձայն։

19. Եթե տվյալ գյուղում խնայողական գանձարկղի, գյուղատնտեսական վարկային հիմնարկության կողմից ամենահասարակ ֆոնդային գործառնությունները չեն կատարվում (ինչպես որինակ տոկոսների վճարումներն ըստ կտրոնների, շահումների ու մարված պարտատոմսերի վճարումը), այդ դեպքում գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովներն աշխատում են շրջգործկոմներին կից ոժանդակող հանձնաժողովների միջոցով կազմակերպել այդ գործառնությունները։

20. Երբ գյուղխորհուրդներին ոժանդակող հանձնաժողովները գտնում են, վոր գյուղում չեղած խնայողական գանձարկղը, գյուղատնտ. վարկային հիմնարկությունը կամ մի այլ հիմնարկություն ի վիճակի չե ֆոնդային ավելի բարդ գործառնություններ կատարել, ինչպես որինակ, պահ տալու, պարտատոմսերի փոխանակության գործառնությունները, նրանք համապատասխան միջնորդություն են հարուցանում նման գործառնություններն ընդարձակելու և շրջգործկոմներին կից ոժանդակող հանձնաժողովների միջոցով կատարելու։

21. Կատարած փորձերի փոխանակության և ինքնաքննադատության սկզբունքները կյանքում անցկացնելու նպատակով գյուղական հանձնաժողովները, ձեռնարկությունների ոժանդակող հանձնաժողովների հետ (եթե այդպիսիները գոյություն ունեն գյուղխորհուրդների տերրիտորիայում (սահմաններում) միացյալ ժողով են գումարում, աշխատանքի վերաբերյալ զեկուցում են, քննում, թե ինչպես հետագայում զարգացնել փետփոխառությունն ու խնայողական գործը և այլն։

22. Ոժանդակող հանձնաժողովները (գյուղխորհուրդներին կից) կազմակերպում են սոցիալիստական մրցակցություն, ինչպես միացյալ գյուղխորհուրդ ունեցող գյուղերի, նույնպես և առանձին գյուղացիական տնտեսությունների մեջ։ Նույնը պիտի անել և միևնույն գյուղխորհրդի տերրիտորիայի վրա գտնվող գործարանների բանվորական զավոդների ու արտադրական կոոպերատիվների ստորին ցանցի կոլեկտիվների ու այլ գյուղացիական միությունների մեջ։

23. Մրցման նպատակն է լինելու ա) տվյալ գյուղում ավելի լայն կերպով տարածել փոխառությունների իրացումը, բ) ամենամեծ չափով բաժնեգրել. մրցման շրջանն անցնելուց հետո մրցակցությունը նպատակ պիտի ունենա ա) պարտատոմսերի 100 տոկոսային ստուգումը շահող աղյուսակներով, բ) տեղեկատու աշխատանքներն ամենալավ հիմքերի վրա դնել և գ) ամենայերկարատև ժամանակով պարտատոմսերը պահել։

Խնայողական գործի նկատմամբ մրցակցության նպատակը կայանում է ամենամեծ թվով գյուղացի բաժանորդներ գտնելու, գյուղացիական ավանդների միջին չափը բարձրացնելու և խոշոր չափով նպատակային կուտակումները զարգացնելու մեջ։

V. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

24. Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովների աշխատանքները խնայողական գործի նկատմամբ, կայանում է նրանում, վոր պրոպագանդիստական աշխատանք տանեն խնայողական գործի

շուրջը, ավանդատուների թիվն ավելացնեն, խնայողական գործի վերաբերյալ գյուղացիությանը տեղեկատու-խորհրդատու աշխատանքներով սպասարկեն, ամեն տարի գումարվող խնայողության համամիութենական կամպանիայի կազմակերպչական աշխատանքները կատարեն (յերկշաբաթուրյակներ), նախապատրաստեն ու անցկացնեն, աշխատելով հետագայում կամպանիայի արդյունքներն ավելի ամրապնդել։

25. Վորպեսզի համամիութենական կամպանիան հաջող ընթանա, գյուղխորհուրդներին կից ուժանդակող հանձնաժողովները՝ ա) մշակում են նախապատրաստական աշխատանքների ծրագիրը. ովյալ գյուղխորհրդով միացված գյուղերում կամպանիան անց են կացնում ու ամրացնում են նրա արդյունքները, ներգրավելով այդ աշխատանքների մեջ կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական և կանանց ակտիվը, հրահանգում են նրանց և կամպանիայի հետագա աշխատանքները կատարելիս հենվում են նրանց վրա, բ) յեթե խնայողական գործի համամիութենական կամպանիան զուգադիպվում է գյուղում տարվող մի ուրիշ կամպանիայի, ուժանդակող հանձնաժողովն ամեն միջոց ձեռք է առնում, վորպեսզի կամպանիաների մեջ կապ ստեղծվի և հաջող անցնեն, գ) համապատասխան խնայողական գանձարկղներից ագիտացիոն նյութեր (լոզունգներ, թերթիկներ, գիմումներ, բրոշյուրներ և այլն) են ստանում ու հասարակության մեջ տարածում կամ աչքի ընկնող տեղերում փակցնում. դ) գյուղական բոլոր ժողովներում, կոնֆերենցիաներում խնայողական գործի համամիութենական կամպանիայի խնդիրների. ու նպատակների

մասին զեկուցումներ են կազմակերպում, ինչպես և գյուղացիներին բացատրում են թե խնայողական դրամարկղն ինչ արտոնություններ ու առավելություններ է տալիս իր ավանդատուներին. յե) անհատական ագիտատորների կադրեր են պատրաստում ու հրահանգում, հատուկ ուշադրություն դարձնելով խնայողական գործի լիազորների, նաև գյուղական նամակատարների ու գյուղթղթակիցների վրա. զ) գյուղի ակտիվի, խնայողական գործի, գյուղական նամակատարների, խնայողական գանձարկղի աշխատակիցների և գյուղթղթակիցների ուժերով շրջում են գյուղացիների տները, վորպեսզի ավելի մասսայականացնեն խնայողական գործի գործարքները, տված ուղուտներն ու հարմարությունները, միաժամանակ անդամագրում են նորերին, ապահովելով նրանց կամավոր կերպով խնայողական գանձարկղի շարքերն անցնելուն։ Թույլ չեն տալիս, վոր վարչական ստիպողական մեթոդ գործադրվի, ապահովում են ավանդների (պահ տրված դրամների) գաղտնությունը. է) այնպես են կազմակերպում, վոր գյուղատնտեսական արտադրություններում ու խորհրդային տնտեսություններում, նաև այլ միություններում աշխատող գյուղացիներն իրենց ռոճիկի մի մասը կամավոր փոխանցեն խնայողական դրամարկղները. ը) մրցակցություն են կազմակերպում անհատ համակրողների, գյուղլիազորների, գյուղական նամակատարների և ուրիշ ակտիվիստների մեջ։ Ավելի մեծ չափով շատ ավանդներ և ավանդատուներ ներգրավելու խնայողական դրամարկղները։ Միևնույն ժամանակ ուժանդակում են գյուղերում նույն մրցակցությունը կազմակերպելու. թ)

պատի թերթերի միջոցով կամպանիայի ընթացքի մասին մշտական ինֆորմացիա չեն կազմակերպում և այլն. ժ) շրջգործկոմներին կից հանձնաժողովների հետ կենդանի կապ են պահպանում և նրանցից կամպանիան հաջող անցկացնելու համար հրահանգչական ցուցմունքներ ստանում։

— Ոժանդակող հանձնաժողովներն իրենց սիստեմատիկ աշխատանքներով խնայողական գործի համամիութենական կամպանիան անցկացնելու համար՝ ա) ստուգում և ուսումնասիրում են անհատական ադիտատոր աշխատակիցների աշխատանքները և կամպանիայի ընթացքում այդ աշխատանքներին այնպիսի ուղղություն են տալիս, որ բաժնեգրվածներն ամուր կապվեն խնայողական գանձարկղներին. բ) անհրաժեշտ միջոցներ են ձեռք առնում, որպեսզի դրամարկղի աշխատակիցները հաճախորդներին բարեկիրթ և ուշադիր վերաբերմունք ցույց տան. գ) մուծված ավանդների գաղտնի պահելն ապահովում են, թույլ չեն տալիս, որ ավանդների մասին տեղեկություններն ոգտագործվեն (մասնավորապես հարկային տեսուչների կողմից) և այլն։ Պահ տրված ավանդների մասին ուրիշներին տեղեկություն տվողներին անմիջապես պատասխանատվության են ենթարկում. դ) գյուղացիներից ավելի հեղինակավորների առաջքաշմանն առանձին ուշադրություն են դարձնում. այդպիսիներին խնայողական դրամարկղի գործի գյուղական լիազորի ոգնականի պաշտոնը տալով. հրահանգում, դիտում և ոգնում են նրանց աշխատանքների ընթացքում. յե) միջոցներ են ձեռք առնում, որ աչքի ընկնող տեղերում բողոքի արկղներ կախվեն (պահանջելով այդպիսիները համապատասխան խնայողական դրամարկղներից)։ Ամիսը մի անգամ կանոնավոր կերպով գյուղացիների ներկայացուցիչների ներկայությամբ բաց են անում այդ արկղները. բողոքների քննությունն ու նրանց նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռք առնելը կատարվում է ոժանդակող հանձնաժողովների նիստերում և արձանագրվում է. բողոքատուներին՝ իրենց տված բողոքների հետևանքներն անմիջապես հայտնում են։

VI. ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԵԼԸ

27. Նոր պետական փոխառություններ բաց թողնելու ժամանակ գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովներն ավելի ուժեղ թափով են տանում իրենց սովորական աշխատանքները։ Սրա հետ միասին գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովներն առանձին ուշադրություն են դարձնում փոխառությունները տարածող իրենց կոնտրագենտների աշխատանքներին և նրանց կատարած բոլոր սխալների մասին տեղեկացնում են շրջգործկոմներին կից ոժանդակող հանձնաժողովներին։

ԽՍՀՄ ԿԳԿ կից պետվարկին և խնայգանձարկղին ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի նախագահ Ս. ՉԱՑԿԱՅԵՎ

ՀՀ Ազգային գրադարան
NL0209150

426